ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 սեպտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

133
(2613)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 96

«Ոստիկանը մերն» է վանկարկող ու այդ կարգախոսով իշխանության եկած Նիկոլ Փաշինյանը, փաստացի, ոստիկանությանն իսկապես իրենով է արել: Նախկին իշխանության գործելաոճը քննադատող Փաշինյանը, թե. «Հայաստանը ոստիկանապետության են վերածել, ու ոստիկանությունն անմիջապես երկրի առաջնորդի հրահանգներն է կատարում», այժմ ճիշտեւճիշտ նույն գործելաոճն է իրականացնում: Ապացույցը երեկ՝ սեպտեմբերի 21-ին, «Եռաբլուր» զինվորական պանթեոնում ոստիկանների «փռեմ ասֆալտին, ծեփեմ ասֆալտին» իրականացրած գործողություններն են՝ զոհված զինծառայողների ծնողների նկատմամբ: Նիկոլ Փաշինյանը, որ 2018-ի իշխանափոխությունից երեք ամիս անց՝ իր պաշտոնավարման 100 օրն ամփոփելու հանրահավաքին, ոստիկաններին առանձնահատուկ ուշադրության էր արժանացնում ու «ոստիկանը մերն է վանկարկում», այժմ, փաստորեն, իր անվտանգությունն ապահովելու համար պատրաստ է անցնել բոլորի վրայով՝ անկախ նրանից, թե դիմացինն ով է ու ինչ է տվել պետությանը, հայրենիքին: «Եվ, այո, ոստիկանը մերն է, որովհետեւ նա ծառայում է ՀՀ ժողովրդին ու քաղաքացուն»,- բարձրագոչում էր ՀՀ փաստացի ղեկավարը: Բայց ինչպես ինքն էր ասում՝ իրավիճակ է փոխվել, ու ոստիկանությունը նորից ծառայում է օրվա իշխանությանը: Հասարակական կարգը հսկողներն այժմ էլ Փաշինյանի անվտանգության համար են մեծաթիվ ուժեր կենտրոնացնում, հսկում նրա տեղաշարժն ու բիրտ ուժ կիրառում անգամ նրանց նկատմամբ, ովքեր հայրենիքին ամենաթանկը՝ որդուն են տվել: Նիկոլ Փաշինյանը, ոստիկանության մասին տարաբնույթ հայտարարություններ անելով ու համոզելով, թե «ոստիկանը քաղաքացուն է ծառայում», հերթական անգամ ստել է:



ՀՀ իշխանությունները որոշել են ՀՀ նախկին փոխվարչապետ Տիգրան Ավինյանին ամեն գնով Երեւանի փոխքաղաքապետ նշանակել: Եվ չնայած՝ սեպտեմբերի 13-ին սկսված ռազմական գործողությունների հետեւանքով Երեւանի ավագանու նիստը հետաձգվել էր, սակայն «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունները հետ չեն կանգնել իրենց մտքից: Ավելին, հենց վաղը՝ սեպտեմբերի 23-ին, տեղի կունենա Երեւանի ավագանու նիստ: Մենք տեղեկացանք, որ օրակարգի հենց առաջին հարցն էլ Տիգրան Ավինյանին Երեւանի փոխքաղաքապետ նշանակելու մասին հարցն է: Առհասարակ, նիստի օրակարգում ընդգրկված է 23 հարց, սակայն իշխանությունների համար այս պահին օրակարգայինը հենց Տիգրան Ավինյանի նշանակումն է, եւ, չնայած սահմաններում լարվածությունը դեռ պահպանվում է, սակայն դա հետ չի պահում նրանց՝ կատարելու իրենց ծրագիրը: Հավելենք, որ Տիգրան Ավինյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքապետի թեկնածուն է, եւ, չնայած Երեւանի ավագանու հերթական ընտրություններին դեռ մեկ տարի կա, սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ Տիգրան Ավինյանն արդեն սկսել է քարոզարշավը եւ PR քայլեր է իրականացնում անգամ «Սուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունի դժբախտության ֆոնին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ Քննչական կոմիտեն Արցախի պաշտպանության նախկին նախարար Ջալալ Հարությունյանին մեղադրանք առաջադրելուց հետո նրան կրկին հրավիրել է հատուկ կարեւորագույն գործերով վարչություն՝ հարցաքննության: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց տեղեկությունը պարզել Արցախի պաշտպանության նախկին նախարար Ջալալ Հարությունյանի փաստաբան Արսեն Սարդարյանից, սակայն նա նշեց, որ որեւէ բան ասել չի կարող: Ի դեպ, մեզ հասած լուրերի համաձայն՝ Ջալալ Հարությունյանի գործով ՊԲ ողջ անձնակազմը հարցաքննվել է: Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի Պաշտպանության բանակը ղեկավարած Ջալալ Հարությունյանին երկու դրվագով առաջադրված մեղադրանքներից մեկը Ցորի զորամասի 20 հրետանավորների զոհվելու հանգամանքներին է վերաբերում: 44-օրյա պատերազմի օրերին ծանր վիրավորում ստացած ու այդ պատճառով պաշտոնից ազատված 47-ամյա Ջալալ Հարությունյանին առաջադրված մեղադրանքի մյուս դրվագով՝ հենց նրա գործողությունների հետեւանքով են հոկտեմբերի 7-ին՝ հակահարձակման ժամանակ, հայկական ստորաբաժանումները մարդկային մեծաքանակ ուժի ու զինտեխնիկայի կորուստ կրել, պահեստային ստորաբաժանումները դարձել են անմարտունակ, զբաղեցրած կրակային դիրքերն անցել են հակառակորդի հսկողության տակ:



Այս տարվա հունվար-հուլիս ամիսներին Հայաստանում գրանցված հանցագործությունների ընդհանուր թիվը կազմել է 20 հազար 963 դեպք: Անցած տարվա նույն ժամանակահատվածում Հայաստանում գրանցված է եղել հանցագործությունների 15 հազար 726 դեպք: Այսինքն, հանցագործությունների թիվը մեկ տարվա կտրվածքով ավելացել է 5237 դեպքով: Ի դեպ, հիմնականում աճել են ոչ մեծ ծանրության հանցագործությունները: Անցած տարվա յոթ ամիսներին Հայաստանում գրանցվել է ոչ մեծ ծանրության հանցագործությունների 8 հազար 265 դեպք, այս տարի այդ ցուցանիշը կազմել է 12 հազար 519: Այս տարվա յոթ ամիսներին կաշառք ստանալու ընդամենը 136 դեպք է գրանցվել: Ի դեպ, հասարակական անվտանգության, հասարակական կարգի եւ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ են եղել, որոնց մասով այս տարվա յոթ ամիսներին դեպքերի նշանակալի աճ է արձանագրվել: Անցած տարվա 3 հազար 287 դեպքի դիմաց այս տարի արձանագրվել են 5 հազար 956 հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Նշենք նաեւ, որ հասարակական կարգի դեմ ուղղված հանցատեսակներից էլ աճը հիմնականում արձանագրվել է թմրանյութի հետ կապված հանցատեսակներում: Բացի այս, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ գրանցված հանցագործությունների մեծ մասը՝ 11 հազար 822 դեպք, արձանագրվել է Երեւանում, հաջորդը՝ Արարատի մարզն է: Միայն Կոտայքի մարզում հունվար-հուլիսին գրանցվել է հանցագործության 1526 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ 1282-ի դիմաց:

ՆՎԱՀՈՂ ՎԱՐԿԱՆԻՇ

ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ը զրուցել է ՌԴ Պետդումայի պատգամավոր Կոնստանտին Զատուլինի հետ, որը վերջին օրերին Հայաստանում էր: Պետդումայի պատգամավորը Հայաստան էր այցելել սեպտեմբերի 16-18-ը: Զատուլինը մեզ հետ զրույցում նկատում է՝ Արևմուտքը խաղում է Հայաստանի եւ Ադրբեջանի հետ, նրա գլխավոր նպատակը Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանից դուրս մղելն է, եւ այդ հարցում նորանոր հաջողություններ է հասնում:

Նշենք, որ հայաստանյան այցի ընթացքում Պետդումայի պատգամավորը ծանոթացել է անցած շաբաթվա սկզբին Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ռազմական գործողությունների բռնկմանը հաջորդած իրավիճակին: Նա այցելել է գնդակոծության ենթարկված Ջերմուկ քաղաք:

-Պարոն Զատուլին, խնդրում եմ ասել՝ Հայաստան այցի ընթացքում որտե՞ղ եք եղել, ի՞նչ հանդիպումներ եք ունեցել:

-Ես շատ բաներ եմ տեսել Հայաստանում: Ես եղել եմ Երեւանում, այցելել եմ Ջերմուկ, որի մասին նաեւ գրառում եմ կատարել, հանդիպել եմ Արցախի Հանրապետության նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանի եւ Բակո Սահակյանի հետ: Հանդիպում եմ ունեցել նաեւ «Հայաստան» դաշինքի առաջնորդ, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Մասնակցել եմ նաեւ Ապարանում կազմակերպված միջոցառմանը:

-Դուք նշեցիք, որ այցելել եք նաեւ Ջերմուկ, որն անցած շաբաթվա սկզբին տուժել էր Ադրբեջանի գործողությունների հետեւանքով: Ի՞նչ իրավիճակի եք ականատես եղել:

-Հայաստանում իրավիճակը իսկապես բավականին լարված է, քանի որ մարտական գործողությունների բռնկումն ու Ադրբեջանի զինված ուժերի՝ Հայաստանի սահմաններում առաջխաղացումը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Կրակոցների հետեւանքով նաեւ կորուստների թիվն է մեծ, ինչը եւս մտահոգիչ է:

-Սեպտեմբերի 13-ին սկսած գործողություններից հետո ՌԴ-ից, ինչպես նաեւ ՀԱՊԿ-ից չինչեցին հստակ հայտարարություններ եւ կոչեր՝ի աջակցություն Հայաստանի. այս ամենը նաեւ հակառուսական տրամադրություններ են առաջացրել: Ի՞նչ կասեք այս մասով, ինչու՞ պարտավորությունները չեն կատարվում:

-ՀԱՊԿ-ի շուրջ իսկապես քննադատությունը բավականին մեծ է: Ինձ թվում է, որ Հայաստանի ղեկավարությունն ամեն կերպ փորձում է հիմա ցուցադրել իր ցանկությունը՝ դեպի Արեւմուտքի կողմը դիրքավորվելու մասով, եւ բարձաձայն էլ ասում էին այդ մասին: Ես Հայաստանում էի այն ժամանակ, երբ այստեղ էր նաեւ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի նախագահ Նենսի Փելոսին, գիտեմ, թե ինչպիսի՝ հատուկ կերպով ընդունելության է նա արժանացել: Ես գիտեմ, որ այդպիսի ընդունելության շատ քիչ մարդիկ են արժանանում: Հայտարարություններ հնչեցին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի կողմից, եւ հենց քննադատություն էր առկա ՀԱՊԿ-ի առնչությամբ եւ պաշտպանություն՝ ԱՄՆ-ի: Այս բոլոր հայտարարությունները պետք է հստակ վերլուծվեն, այդ թվում՝ նաեւ մեր կողմից: Հայաստանի կառավարությունը փորձում է Արեւմուտքի հետ հարաբերությունները զարգացնելու շնորհիվ դաշնակից ձեռք բերել, եւ Արեւմուտքը իր կողմից բոլոր ձեւերով փորձում է ՌԴ-ին հեռացնել տարածաշրջանից. դրա վկայությունը նաեւ բրյուսելյան բազմաթիվ հանդիպումներն են, որտեղ ՌԴ-ն չի մասնակցում: Ես կարծում եմ, որ ՀՀ-ն հավատում է Արեւմուտքից հնարավոր օգնությանը: Սակայն նկատենք, որ Լեռնային Ղարաբաղում խաղաղություն այժմ ապահովվում են ռուս խաղաղապահները, ու այնպիսի տպավորություն է, որ դրանից գոհ ու շնորհակալ են միայն Ղարաբաղի հայերը: Կարծես Հայաստանը բոլոր հետեւանքներն ու պարտավորությունները թողել է միայն ՌԴ-ի վրա, իսկ իշխանություններն էլ վախենում են իրենց օրեցօր նվազող վարկանիշի համար:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՊԵՏՔ Է ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Երեկ Եռաբլուրում տեղի ունեցած միջադեպն ամոթալի էր եւ անթույլատրելի: Նիկոլ Փաշինյանին զոհվածների հարազատներից պաշտպանելու համար՝ որդեկորույս ծնողներին բիրտ ուժի կիրառմամբ բերման ենթարկելը խայտառակություն էր:

Անկախ ամեն ինչից՝ պետք է հարգել հայրենիքի համար նահատակված հերոսների ծնողների վիշտը, ինչպես նաեւ՝ նրանց գործողությունները, որքան էլ որ դրանք լինեն իշխանության համար տհաճ:

Գուցե հայրենիքի պաշտպանների ծնողներն իրենց ցասումն արտահայտելու տարբեր ձեւեր ընտրեն, այնուամենայնիվ, մենք պարտավոր ենք հարգել նրանց, մեծարել ու մշտապես խոնարհվել:

Անթույլատրելի է ծնողներին բաժանել մերոնք-ձերոնքի. իշխանությունն, ըստ երեւույթին, առաջնորդվում է հետեւյալ տրամաբանությամբ. այն ծնողները, ովքեր Աննա Հակոբյանի հրավերն ընդունում են եւ մասնակցում միջոցառումներին, նրանք լավն են, իսկ ովքեր էլ պահանջատիրություն են դրսեւորում, բարկություն ու ցասում են արտահայտում, նրանց արժանապատվությունը նսեմացնելով՝ բերման են ենթարկում:

ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ

Սեպտեմբերի 25-ին՝ մի քանի օր անց, Հայաստանի մի շարք մարզերում Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ տեղի կունենան: ArmLur.am-ը քանիցս գրել է, թե որ համայնքերում ովքեր են առաջադրված ու, այսպես ասած, ով ում դեմ է ընտրապայքարի մեջ մտել: Սեպտեմբերի 13-ից հետո, երբ Ադրբեջանը հարձակվել էր ՀՀ սուվերեն տարածքի վրա, ընտրությունների պատրատվող կուսակցություններն ու թեկնածուները, իրավիճակից ելնելով, դադարեցրել էին քարոզարշավն ու տարբեր հարթակներում դա որպես բարի կամքի դրսեւորում ներկայացրել:

Օրեր առաջ սակայն՝ մարզերում կուսակցություններն ու առաջադրված թեկնածուները կրկին կատաղի պայքարի են անցել: Օգտագործելով գրեթե բոլոր ռեսուրսները, հնարավորություններն ու հրապարակ բերելով տարածաշրջանում քիչ թե շատ հեղինակութուն ունեցող անձնաց՝ քաղաքական ուժերն անում են հնարավորը, որ բաղձալի աթոռը հենց իրենց բաժին հասնի:

Գրեթե բոլոր համայնքներում, որոնք, ի դեպ, մեծամասամբ խոշորացվում են՝ էլ ավելի մեծ համայնքներ ձեւավորելով, հիմնական ֆավորիտներ ունեն իշխող «Քաղաքացիական պայմանագիրն» ու անհասկանալի՝ ո՛չ ընդդիմադիր, ո՛չ իշխանամետ դիրքորոշում բռնած «Ապրելու երկիր» կուսակցությունը: Նրանց համար, փաստորեն, Հայաստանում պատերազմն ավարտվել է, սահմաններին իրավիճակը հանգիստ է, կրակոց չկա, հետեւաբար կարելի է գործի անցնել ու քվեներ կորզելով զբաղվել. հոգ չէ, որ թշնամու հրթիռները յուրքանչյուր պահի նորից կարող են մեր գլխին տեղալ:

ՆՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատարանների նախագահներին կվերապահվեն նոր լիազորություններ, ըստ որի՝ նրանք կկարողանան հետեւել գործերի քննության ժամկետների պահպանմանը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ արդարադատության նախարարությունն առաջարկում է Երեւանում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի փոխարեն կգործեն երկու առանձին՝ քրեական եւ քաղաքացիական մասնագիտացված դատարանները:

Ավելին, դատավորի վարույթում առանձնակի բարդության գործի առկայությամբ պայմանավորված՝ դատավորի անուն-ազգանունը բաշխման ցանկից ժամանակավորապես հանելը կամ բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ սահմանելը կկատարվի դատարանի նախագահի միջնորդությամբ:

Նշենք, որ դատական օրենսգրքով դատավորների անունները գործերի բաշխման ցանկից հանելու լիազորությունը վերապահված է Բարձրագույն դատական խորհրդին, իսկ դատարանի նախագահն այս հարցի լուծման մեջ որեւէ դեր չունի:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԼԻՆԻ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՀՀ եւ Արցախի նախկին նախագահներին ու Կաթողիկոսներին մեկ հարկի տակ հավաքելու եւ քննարկում կազմակերպելու նախաձեռնությունն իր վրա է վերցրել ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ինչպես հայտնի է, նման առաջարկությամբ հանդես էր եկել ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանը, սակայն, հենց առաջին նախագահն է որոշել զբաղվել այդ հարցով:

Եվ ահա, ArmLur.am-ի տեղեկություններով, հենց նա է կազմակերպելու, որ ՀՀ եւ Արցախի բոլոր նախագահներն ու կաթողիկոսները հավաքվեն ու Հայաստանն այս իրավիճակից դուրս բերելու ելքեր առաջարկեն ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Նրանք պահանջելու են, որ Նիկոլ Փաշինյանը կոնկրետ քայլեր անի այդ ուղղությամբ եւ չխուսափի պատասխանատվությունից: Ավելին, մեր տեղեկություններով՝ այդ հանդիպումը տեղի կունենա առաջիկա օրերին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի քաղաքապետարանն ուսումնասիրություններ է իրականացնում իր ենթակայության տակ գտնվող դպրոցներում ու մանկապարտեզներում, որպեսզի անհրաժեշտության դեպքում թաքստոցները պատսպարմանը պատրաստ լինեն: ArmLur.am-ին քաղաքապետարանից փոխանցեցին, որ այս պահին վարչական շրջաններում ընթանում են կցագրման ճշգրտման աշխատանքներ, թե որ շենքի բնակիչների թաքստոցը որտեղ է լինելու:

Ավելին, արդեն կան որոշակի վարչական շրջաններ, որտեղ բուն թաքստոցների տարածքների մաքրման աշխատանքները կամ ավարտվել են, կամ արդեն ընթանում են: Քաղաքապետարանից փոխանցեցին, որ ըստ շենքերի գտնվելու վայրերի՝ այս կամ այն թաքստոցների կոնկրետ տեղերի մասին բնակիչները կիրազեկվեն շենքերի մուտքերի մոտ, տեսանելի վայրերում փակցված թերթիկներով:

ՆՊԱՍՏ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ

Ընտանեկան եւ սոցիալական նպաստի, ինչպես նաեւ հրատապ օգնության գումարների վճարումները 2023 թվականի հունվարի 1-ից քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղերում կիրականացվի անկանխիկ եղանակով: ArmLur.am-ը տեղեկացավ, որ աշխատանքի սոցիալական հարցերի նախարարությունն առաջարկում է 2024 թվականից մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում ընտանեկան եւ սոցիալական նպաստի, ինչպես նաեւ հրատապ օգնության գումարների վճարումները իրականացնել անկանխիկ եղանակով:

Ի դեպ, տեղեկացնենք, որ կենսաթոշակների անկանխիկ եղանակով վճարման համակարգը քաղաքներում ներդրվել է: Իսկ հաջորդ տարվա հունվարի 1-ից կներդրվի 1000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերում, 2024 թվականից՝ մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում:

Բացի այս, սոցապ նախարարությունն առաջարկում է ընտանեկան եւ սոցիալական նպաստի, ինչպես նաեւ՝ հրատապ օգնության գումարներն անկանխիկ եղանակով վճարել բացառապես բանկերի միջոցով:

31-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՆ ԵՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ

ՀՀ Անկախության 31-րդ տարեդարձի առթիվ երեկ շնորհավորական ուղերձներ են հղել մի շարք երկրների ղեկավարներ, որոնք նաեւ հեռագա համագործակցության մասին հիշատակումներ են պարունակում: Օրինակ՝ Իրանի նախագահ էբրահիմ Ռաիսին առանձին շնորհավորական ուղերձներ է հղել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա կապակցությամբ:



Այս ուղերձներում Իրանի նախագահը նշել է, որ Իրանը իր հարեւանների հետ քաղաքականության շրջանակներում առանձնակի կարեւորում է հարաբերությունները՝ կովկասյան տարածաշրջանի երկրների, այդ թվում՝ բարեկամ Հայաստանի հետ, եւ պատրաստ է խորացնել փոխադարձ շահերի վրա հիմնված համապարփակ հարաբերությունները՝ օգտագործելով ընդհանուր պատմական, մշակութային ընդհանրությունները: ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը Հայաստանի Անկախության օրվա կապակցությամբ շնորհավորական ուղերձ է հղել: « Մենք կշարունակենք աջակից լինել Հայաստանի ժողովրդի ժողովրդավարական ձգտումներին, ինքնիշխանությանը եւ անվտանգությանը: Մենք գնահատում ենք՝ տարածաշրջանում ավելի մեծ կայունության ապահովման ջանքերին աջակցելու ձեր պատրաստակամությունը: Ցավակցում ենք վերջին հարձակումների պատճառով մարդկային կորուստների իրողությունը եւ փաստում, որ մենք հանձնառու ենք աշխատել ձեր եւ մյուս կողմերի հետ հակամարտության խաղաղ կարգավորման խթանման նպատակով: Լիահույս ենք, որ մեր երկկողմ հարաբերությունները եւ տնտեսական կապերը կշարունակեն վերելք ապրել: Բարեկեցություն եւ խաղաղություն եմ մաղթում հայ ժողովրդին», - ասել է նա:

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը եւս շնորհավորական ուղերձ է հղել վարչապետ Նիկոլ Փաշինյանին: «Կարեւոր նշանակություն ենք տալիս Հայաստանի հետ բարեկամական, դաշնակցային հարաբերություններին: Կարեւոր է, որ մեր երկրները հաջողությամբ փոխգործակցում են տարբեր ոլորտներում, համակարգում ջանքերը ԵԱՏՄ-ի, ՀԱՊԿ-ի, ԱՊՀ-ի եւ այլ բազմակողմ կառույցների շրջանակներում: Վստահ եմ, որ կառուցողական երկկողմ կապերի հետագա զարգացումը բխում է ռուս եւ հայ ժողովուրդների հիմնարար շահերից, իսկ 2020 եւ 2021 թվականներին կնքված եռակողմ հայտարարությունների հետեւողական իրականացումը լավ հիմք է Անդրկովկասում երկարաժամկետ խաղաղության եւ անվտանգության ապահովման համար», - հավելել է նա:

Այլ տարբեր երկրների ղեկավարների կողմից եւս շնորհավորական ուղերձներ եւ շեշտադրումներ են եղել: Չեխիայի վարչապետ Պետր Ֆիալայի շնորհավորական ուղերձում ասված է. «Մեր երկրներն ունեն բարեկամական հարաբերություններ, եւ ես հավատացած եմ, որ մեր համատեղ ջանքերով մենք կկարողանանք լավագույնս զարգացնել դրանք: Ես բարձր եմ գնահատում Հայաստանի կառավարության կողմից բարեփոխումների եւ վերափոխումների հավակնոտ ծրագրի իրականացումը եւ ցանկանում եմ հավաստիացնել Ձեզ, որ Չեխիան կշարունակի մնալ Հայաստանի հավատարիմ գործընկերը՝ դեպի ժողովրդավարություն տանող ճանապարհին եւ աջակցող գործընկերը՝ ԵՄ հետ համագործակցության շրջանակներում:

Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնի շնորհավորական ուղերձում նշված է. «Օգտվելով առիթից՝ վստահություն եմ հայտնում, որ հայ-տաջիկական բարեկամության եւ կառուցողական համագործակցության հարաբերությունները կշարունակեն շարունակաբար զարգանալ՝ ի շահ մեր ժողովուրդների, ինչպես նաեւ՝ երկու պետությունների հիմնարար շահերին համապատասխան: Ակնկալում եմ այս ուղղությամբ Ձեզ հետ հետագա սերտ համագործակցություն»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Սեպտեմբերի 21-ին ԱՀ ԱԺ խմբակցությունների ղեկավարները հանդիպել են Արցախում ռուս խաղաղապահ զորակազմի հրամանատար գեներալ- մայոր Անդրեյ Վոլկովի հետ: Այս մասին տեղեկացնում են ԱՀ ԱԺ լրատվության բաժնից:

Կարեւորելով Արցախում ռուս խաղաղապահ առաքելության դերակատարությունը տարածաշրջանում կայունություն ապահովելու գործում՝ քննարկել են ընդհանուր ստեղծված իրավիճակը, տարածաշրջանում առկա եւ հետագա հնարավոր զարգացումները:

Հանդիպմանն անդրադարձ է կատարվել Լաչինի միջանցքի գործարկված նոր երթուղու հետ կապված՝ հասարակության մոտ առկա որոշ խնդիրներին: Ռուս խաղաղապահ զորակազմի հրամանատարը հավաստիացրել է, որ միջանցքի անվտանգությունն ամբողջությամբ գտնվում է ռուս խաղաղապահների հսկողության ներքո եւ ընթացիկ շինարարական աշխատանքների ավարտմանը զուգընթաց կվերանան առկա խնդիրները:

Հանդիպմանն ընդգծվել է՝ տարբեր ձեւաչափերով հաճախակի շփումների անհրաժեշտությունը, որի արդյունքում լուծումներ կտրվեն հասարակությանը հուզող մտահոգություններին:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Սեպտեմբերի 20-ին ՄԱԿ ԳԱ 77-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Շրի Լանկայի ԱԳ նախարար Ալի Սաբրիի հետ:

ԱԳՆ-ից հայտնում են, որ զրուցակիցները մտքեր են փոխանակել մի շարք ոլորտներում երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացման հեռանկարների շուրջ:

ՈՐՈՇՈՒՄ՝ ՊԱՐԳԵՎԱՑՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը սեպտեմբերի 20-ին որոշում է ստորագրել, որի համաձայն՝ Երեւանի քաղաքապետի շնորհակալագրերով է պարգեւատրել երկու աշխատակցի: Որոշման մեջ ասվում է.

«Ղեկավարվելով Երեւան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետով եւ 40-րդ կետով, հիմք ընդունելով Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի գործերի կառավարման եւ սպասարկման վարչության, արձանագրային եւ արխիվային գործերի բաժնի պետերի զեկուցագրերը.

1. Երկարատեւ, բարեխիղճ եւ բարձրորակ աշխատանքի համար Երեւանի քաղաքապետի շնորհակալագրերով պարգեւատրել.

1) Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի գործերի կառավարման եւ սպասարկման վարչության մատակարարման եւ տեխնիկական սպասարկման բաժնի գործավար Աննա Սողիկյանին

2) Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի արձանագրային եւ արխիվային գործերի բաժնի առաջատար մասնագետ Գոհար Համբարձումյանին:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի գործերի կառավարման եւ սպասարկման վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երեւանի քաղաքապետի խորհրդական Մերի Մարգարյանի վրա»:

«ՍՈՒՐՄԱԼՈՒ»

ՎՆԱՍՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՓԼՈՒԶՎԵԼ Է

Սեպտեմբերի 21-ին՝ ժամը 17:45-ին ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Երեւանի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի վնասված շինությունը մասնակի փլուզվել է:

Դեպքի վայր են մեկնել ԱԻՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ, փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական խումբը եւ հոգեբանական աջակցության բաժնի հերթապահ հոգեբանը:

Ըստ նախնական տվյալների՝ կա 3 տուժած, ովքեր տեղափոխվել են «Էրեբունի» ԲԿ:

Հիշեցնենք, որ օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւտրի ողբերգական պայթյունը ցնցեց ողջ հայ ժողովրդին:

«Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած խոշոր պայթյունից անցել է ավելի քան 3 շաբաթ, սակայն տարածքն այդպես էլ չի մաքրվում փլատակների հետքերից: Ավելին, չի ապամոնտաժվում պայթունավտանգ վիճակում գտնվող շինությունը, ինչպես նաեւ շարունակում է միակողմանի փակ մնալ «Սուրմալու»-ին հարակից փողոցը:

Տարածքը մաքրելու գործը մի գերատեսչությունը մյուսի վրա է գցում: Այս թեմայի շուրջ ArmLur.am-ը կապ հաստատեց պատասխանատու կառույցների հետ: Նախ զրուցեցինք ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանի հետ: Սակայն Կոստանյանը փոխանցեց, որ իրենց լիազորություններից դուրս է եւ հավելեց, որ դրանով սեփականատերը պետք է զբաղվի. «Մեր մասով գործողություններն այնտեղ ավարտված են»:

Երեւանի քաղաքապետարանից եւս որեւէ հուսադրող պատասխան չտվեցին: Միայն նշեցին, որ քաղաքապետարանը որեւէ լծակ չունի մասնավոր տարածքում գործառույթներ իրականացնելու կամ միջամտելու: Փաստորեն, ըստ Երեւանի քաղաքապետարանի՝ դա հանրային տարածք չէ:

Իսկ ՀՀ քննչական կոմիտեից ArmLur.am-ին փոխանցեցին, որ այդ տարածքում դեռ քննչական գործողությունները շարունակվում են: Բայց նկատենք, որ մեր այցելության պահին այնտեղ ոչ ոք ոչինչ չէր անում, որեւէ գործողություն չէր իրականացվում: Իսկ հարակից տարածքում բնակվող քաղաքացիները դժգոհում են ոչ միայն ճանապարհի միակողմանի փակ մնալուց, այլեւ փոշուց ու աղբից: Ի դեպ, փլատակի վերածված տարածքի դիմացի առեւտրականները դժգոհում են՝ նշելով, որ փոշուց բացի, մեծ քանակի ճանճեր են հայտնվել:

Հիշեցնենք, որ օգոստոսի 14-ն «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհվել էր 16 քաղաքացի (Միսակ Պատվականի Մարգարյան, ծնված 1965 թ., Անահիտ Վազգենի Մխիթարյան, ծնված 1967 թ., Ջեմմա Սարգսի Նազարյան, ծնված 1960 թ., Անահիտ Ջարգանդի Խալաթյան 1970 թ., Վարդան Գուրգենի Քոչարյան, ծնված 1960 թ., Գայանե Արտավազդի Ավետիսյան, ծնված 1966 թ., Արամ Կոմիսարի Հայրապետյան, ծնված 1980 թ., Վաչագան Վահագնի Եղոյան, ծնված 2000 թ., Էռնա Մանվելի Գրիգորյան, ծնված 1980 թ., Հարություն Սամվելի Գարաքյան, ծնված 1988 թ., Մարիամ Արմենի Խաչատրյան, ծնված 1992 թ., Սիրարփի Արմենի Խաչատրյան, ծնված 1994 թ., Մարատ Կարենի Շահբազյան, ծնված 2018 թ., Հրաչյա Ֆաենբերգի Սարգսյան, ծնված 1976 թ., Արտավազդ Համբարձումի Հայրապետյան, ծնված 1951 թ. եւ անձը չպարզված մեկ քաղաքացու դի) եւ անհետ կորած է համարվում քաղաքացի:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՀԱՆՋԵԼ ԵՆ ԶՐԱՀԱՏԵԽՆԻԿԱ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Եղեգիս եւ Չարենցավան համայնքների ղեկավարները դիմել են ՀՀ պաշտպանության նախարարություն եւ պահանջել զրահատեխնիկա: Բանն այն է, որ այդ զրահատեխնիկան անհրաժեշտ է, որ պեսզի այս երկու համայնքներում կառուցվող հուշահամալիրների տարածքում տեղադրեն: Մեզ հայտնի դարձավ, որ Չարենցավանում կառուցված է Արցախյան պատերազմի ընթացքում զոհված 51 ազատամարտիկների պանթեոն, որին մարտական տեսք տալու համար կտրամադրվի շահագործման համար ոչ պիտանի մեկ միավոր հրանոթ:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԶՈՀԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Հայաստանի կառավարությունը միանվագ դրամական օգնություն կտրամադրի «Սուրմալու» առեւտրի կենտրոնում օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհերի (այդ թվում՝ գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքներին եւ վիրավորում ստացած անձանց: ArmLur.am-ը տեղեկացավ, որ սոցիալական աջակցություն կտրամադրվի՝ հիվանդանոցային պայմաններում մինչեւ երեք օր բուժման մեջ գտնված անձանց՝ 150 հազար դրամի չափով: Իսկ 300 հազար դրամ գումար էլ կտրվի հիվանդանոցային պայմաններում երեք եւ ավելի օր բուժման մեջ գտնված անձանց: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ զոհված անձանց (այդ թվում՝ գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների դեպքում՝ յուրաքանչյուր զոհվածի համար կտրամադրվի 3 մլն դրամ: Խոսքը 41 շահառուի մասին է՝ 24 վիրավորում ստացած եւ 17 զոհված: Այսինքն, այս նպատակով ՀՀ պետական բյուջեից կպահանջվի 55 մլն 650 հազար դրամ:

ՍՅՈՒՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԲԵՐՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ

Երեկ վաղ առավոտից ոստիկանական հսկայական ուժեր էին կենտրոնացել «Եռաբլուր» զինվորական պանթեոնում: Ինչ-որ պահի կարմիր բերետավորները սկսեցին բերման ենթարկել զոհված զինծառայողների ծողներին, այդ թվում՝ կանանց, որոնք եկել էին այստեղ՝ թույլ չտալու, որպեսզի Անկախության օրվա տոնի կապակցությամբ Նիկոլ Փաշինյանն այցելի «Եռաբլուր»: Armlur.am-ը տեղեկացավ, որ բերման է ենթարկվել 39 ծնող, նրանք տարվել են ոստիկանության տարբեր բաժիններ եւ քիչ անց ազատ կարձակվեն:

ՎԱՐՉԱԿԱՆ

44-օրյա պատերազմի հերոս Մխիթար Գալեյանի հայրը՝ Գարիկ Գալեյանը, հայտնեց, որ իրեն բերման են ենթարկել Ոստիկանության Կենտրոնի բաժին, իսկ ահա կնոջը՝ Աստղիկ Գալեյանին, Մասիվի ոստիկանության բաժին: Բաժնում հայտնել են, որ չեն ենթարկվել ոստիկանության օրինական պահանջին եւ վարչական պատասխանատվության մասին արձանագրություն են կազմել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Սեպտեմբերի 19-ին Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը Հայաստանի անունից Արդարադատության միջազգային դատարանին է փոխանցել հաջորդող նամակ Ադրբեջանի կողմից Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման միջազգային կոնվենցիայի շրջանակներում քննվող Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի գործով Դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի միջանկյալ միջոց կիրառելու մասին որոշման շարունակական խախտումների մասին, ներկայացնելով Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների նկատմամբ բռնության եւ զոհված հայ զինծառայողների պղծման հետագա ապացույցներ:

Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակից հայտնում են, որ այդ ապացույցների մեջ ներառված են Ադրբեջանի տիրապետության տակ խոշտանգումների եւ սպանության ենթարկված հայ ռազմագերի Դավիթ Գիշյանի մասին տեղեկությունը: Դատարանին ներկայացվել է նաեւ Ադրբեջանում՝ հակահայկական համատարած ատելության պատկերավոր օրինակներ, եւ կրկնելով իր հրատապ խնդրանքը՝ Դատարանին միջանկյալ միջոց կիրառելու մասին որոշումը փոփոխության ենթարկելու մասին:

ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ Է

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան դատապարտող հայտարարություն է տարածել սեւազգեստ մայրերի նկատմամբ ոստիկանության հատուկ ջոկատայինների գործողությունների վերաբերյալ:

Հայտարարությունում ասվում է. «Երեկ, Հայաստանի անկախության օրը, «Եռաբլուր» զինվորական պանթեոնում, Վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցին ընդառաջ բռնության վայրագ դրսեւորումներով ոստիկանները բերման են ենթարկել 44-օրյա պատերազմում զոհվածների ծնողներին, որոնց մեջ մեծամասնությունը սեւազգեստ մայրեր էին: Ընդ որում, ոստիկանության բռնի գործողությունները ուղեկցվել են կանանց ոտքերից ու ձեռքերից քարշ տալու անպարկեշտ տեսարաններով, ինչպես նաեւ՝ նրանցից մի քանիսը ստացել են մարմնական վնասվածքներ:

Սա առաջին անգամ չէ, որ ոստիկանությունը ուժ է կիրառում սեւազգեստ մայրերի նկատմամբ: Հաճախ որդեկորույս մայրերը բռնությունների էին ենթարկվում պետական շենքերի դիմաց ակցիաներ կազմակերպելու համար: Սակայն, այս անգամ նրանք բռնի կերպով հեռացվեցին իրենց որդիների շիրիմների տարածքից, որպեսզի իշխանություն ունեցողները այցելեն «Եռաբլուր»:

Այսօր, երբ երկրի սահմաններին տեղի է ունենում լայնածավալ բռնություն եւ պանթեոնում նոր շիրիմներ են ավելանում, առանց այդ էլ մեծ լարում ու տագնապ ապրող մայրերը ենթարկվում են հարձակման՝ արդեն ոստիկանության կողմից: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան խստորեն դատապարտում է այս ծայրաստիճան անընդունելի, վայրագ գործողությունները եւ պահանջում. «Հայաստանի Հանրապետության անկախության օրը բռնության մերժման, եւ ոչ թե ցուցադրման օր է: Մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը, ամեն ինչ անել՝ առանց բռնության երկիր կերտելու ճանապարհին»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 19-ից 20-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 44 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանն անդրադարձել է սեպտեմբերի 21-ի առավոտյան «Եռաբլուրում» կատարված միջադեպին.

«Երեկ առավոտյան զոհված զինծառայողների ծնողների նկատմամբ «Եռաբլուրում» Ոստիկանության «կարմիր բերետավոր» ծառայողների բացարձակ անթույլատրելի վերաբերմունքը եւս մեկ ապացույց է, որ մեր երկրում կա որոշում կայացնողների եւ կատարողների արժանապատվության ճգնաժամ:

Ծնողները Հայրենիքին տվել են ամենաթանկը, եւ նրանց նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի ամենաբարձր երախտիքով՝ անկախ նրանց հայացքներից:

Տեղի ունեցածը եւս մեկ անգամ ապացուցեց, որ բարեփոխելու փոխարեն իշխանությունը Ոստիկանությանը ծառայեցնում է իր քաղաքական շահերին՝ դարձնելով այն այդ շահերի զոհը, հեղինակազրկելով Ոստիկանությանը եւ ձախողելով «բարեփոխումները»:

Օրենքներն անգամ ընդունվում են այնպես, որ դրանք ծառայեն ոչ թե իրավունքին, այլ քաղաքական հաշվարկներին:

Բազմիցս եմ ասել, որ Ոստիկանության բարեփոխումը միայն գեղեցիկ մեքենաներով ու համազգեստով չի որոշվում. անհրաժեշտ է իրական բարեփոխել Ոստիկանության հատկապես այն ծառայությունները, որոնք անմիջականորեն են մարդկանց հետ առնչվում:

Տեղի ունեցածն արժանապատվության, անձնական ազատության եւ մյուս սահմանադրական ու միջազգայնորեն երաշխավորված իրավունքների կոպիտ խախտումներ էր»,-նշել է նա:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԱՄՆ ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսին, կոնգրեսականները եւ Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը քննարկել են Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտումները եւ դրանց դեմ Հայաստանի ջանքերը միջազգային դատարաններում: «Երեկ հանդիպել ենք Եղիշե Կիրակոսյանի, խոսնակ Նենսի Փելոսիի եւ հայկական հարցերով հանձնախմբի մյուս անդամների հետ: Մենք քննարկել ենք Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների սարսափելի խախտումները եւ Հայաստանի ջանքերը Արդարադատության միջազգային դատարանում եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում»,-նշել է կոնգրեսականը: Փալոնը նաեւ տեղեկացրել է, որ Կապիտոլիումում զրուցել են Արցախի արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի հետ, քննարկել Արցախում Ադրբեջանի հարձակումների հետեւանքով առաջացած հումանիտար ճգնաժամը, եւ հայ բնակչությանը ադրբեջանական հետագա ագրեսիայից պաշտպանելու անհրաժեշտության հարցը: Սեպտեմբերի 17-19-ը ԱՄՆ ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսին Հայաստանում էր: Փելոսիին ուղեկցում էին Ֆրանկ Փալոնը, Ներկայացուցիչների պալատի անդամներ Աննա Էշուն եւ Ջեքի Սփիերը:

ՍԵՄԻՆԱՐ

ԱՏՈՄԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Երեւանում կայացավ Հայկական ԱԷԿ-ի էներգաբլոկի շահագործումից հանելու եւ ռադիոակտիվ թափոնների (ՌԹ) կառավարման նախապատրաստման հարցերով տեխնիկական սեմինար: Միջոցառման կազմակերպիչներն են Ռոսատոմի «ՏՎԷԼ» վառելիքային ընկերությունը, որը նաեւ հանդիսանում է միջուկային օբյեկտների ապամոնտաժման ռուսական միջուկային արդյունաբերության ու միջուկային ժառանգության վերացման ԱՊՀ-ի երկրների բազային կազմակերպությունը եւ «Ռուսատոմ-Միջազգային ցանց» մասնավոր հասատությունը:

Միջոցառմանը մասնակցում էին ներկայացուցիչներ Հայկական ԱԷԿ-ից՝ տնօրեն Մովսես Վարդանյանի գլխավորությամբ, ինչպես նաեւ ռուսական միջուկային արդյունաբերության կազմակերպությունների մասնագետներ «ՏՎԷԼ» ԲԸ-ից, «Ռուսատոմ սերվիս» ԲԸ-ից, «Ռուսատոմ-միջազգային ցանց» ՄՀ-ից, Միջուկային եւ ճառագայթային անվտանգություն գիտատեխնիկական կենտրոնից:

Սեմինարի մասնակիցները դիտարկեցին Մեծամորի Հայկական ԱԷԿ-ի էներգաբլոկի շահագործումից հանելու նախապատրաստման խնդիրները, ինչպես նաեւ էլեկտրակայանի տեղամասում ռադիոակտիվ թափոնների կառավարման համակարգի արդիականացման հնարավորությունները՝ հաշվի առնելով 2018թ. հաստատված ու համաձայնեցված միջոցառումների ծրագիրը: Մասնակիցները քննարկեցին թափոնների վերամշակման համալիրի արդիականացման հնարավոր համատեղ ծրագրերը, կայանամերձ պահեստարաններից ռադիոակտիվ թափոնների դուրսբերումը, ինչպես նաեւ թափոնների թաղման օբյեկտների կառուցման հեռանկարները:

Ինտեգրատորի մասնագետները ներկայացրեցին «Ռոսատոմի» տեխնոլոգիական լուծումները թափոնների վերամշակման համալիրների նախագծման ու կառուցման համար, ինչպես նաեւ միջուկային ժառանգության օբյեկտների շահագործումից հանելու իրականացված նախագծերի օրինակներ:

«Ատոմային էներգետիկան երկար կյանքի ցիկլ ունի՝ օբյեկտի գործարկումից մինչեւ շահագործումից հանելը կարող է տեւել 60-80 տարի, ուստի ընդունված որոշումները պետք է նախագծվեն մի քանի տասնամյակ առաջ: Այդ իսկ պատճառով սեմինարի ընթացքում մենք քննարկել ենք շահագործումից հանելու եւ ՌԹ-ի կառավարման հետ կապված հարցերի լայն շրջանակ, ներառյալ ենթակառուցվածքների զարգացման ու հեռացման խնդիրները: Սա հնարավորություն է տալիս վստահ լինել ատոմային էներգիայի զարգացման վերաբերյալ կայացված որոշումների կայունությանը եւ երկարաժամկետ հեռանկարում նվազեցնել ընդհանուր ծախսերը: Բացի ռազմավարական խնդիրներից, մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել Հայաստանում ռադիոակտիվ թափոնների կառավարման ոլորտում հրատապ խնդիրների լուծմանը»,-ասաց «ՏՎԷԼ» ԲԸ-ի շահագործումից հանելու ծրագրերի ղեկավար Էդուարդ Նիկիտինը:

Սեմինարի մասնակիցներն այցելեցին նաեւ Հայկական ԱԷԿ, որտեղ ծանոթացան էներգաբլոկների վիճակին եւ ատոմակայանում ներդրված ՌԹ կառավարման համակարգին:

Միջուկային օբյեկտների շահագործումից հանելու ոլորտում նախագծերի իրականացումը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին հասնելու համար ունի բարդ սիներգետիկ ազդեցություն ինչպես բնապահպանական, այնպես էլ տեխնոլոգիաների զարգացման ու տնտեսական արդյունքների առումով:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՌԱԿՏԵԼ ԵՆ

Սեպտեմբերի 25-ին կկայանան Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունները: Ընտրություններին մասնակցում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, «Արդարություն» կուսակցության եւ «Քաղաքացու որոշում սոցիալ-դեմոկրատական կուսակցության ստեղծած դաշինքը՝ «Արժանապատիվ սերունդը», «Իմ հզոր համայնք» եւ Վահան Բաբայանի «Ռեֆորմիստների» կուսակցությունների կազմած դաշինքը՝ «Զորավոր համայնքը»: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու 58 թեկնածուներից 5-ը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառապահներ են, եւս 2 թեկնածու՝ այդ անտառտնտեսության անտառապետ եւ տեղամասի պետ: Արծվաբերդի անտառտնտեսության տնօրեն Ավետիք Ադամյանի որդին՝ Խորեն Ադամյանը Բերդ խոշորացված համայնքի Չինչին բնակավայրի վարչական ղեկավարն է: Բերդ խոշորացված համայնքի գյուղերի վարչական ղեկավարները սեպտեմբերի 25-ի ընտրություններում ընդգրկված են «Զորավոր համայնք» դաշինքի թեկնածուների ցուցակում: Խորեն Ադամյանը եւս այդ դաշինքին է սատարում, սակայն ավագանու թեկնածու չէ, քանզի նախկինում գրանցված է եղել Երեւանում, Բերդ համայնքում նրա գրանցման ժամկետը չի բավարարում ավագանու թեկնածու առաջադրվելու համար: Բերդ համայնքից հայտնեցին,որ ՔՊ-ական իշխանությունը լրացուցիչ հաստիքներ է իջեցրել Արծվաբերդի անտառտեսություն, այնտեղ աշխատանքով ապահովել մարդկանց, որոնք հետո առաջադրվել են ավագանու թեկնածուներ: Նիկոլ Փաշինյանը իշխանությունը, հանրությունը պառակտեց, բաժանեց հեղափոխականներ-նախկինների, սպիտակներ-սեւերի, Բերդում ավագանու ընտրությունների հետ կապված Արծվաբերդի անտառտնտեսության աշխատակազմում էլ բաժանարար գիծ է քաշել:

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

Երբեմնի հզոր Իջեւանի բենտոնիտի կոմբինատը աշխատում է քիչ հզորությամբ, ընդհատումներով: Սեփականաշնորհվելուց հետո կոմբինատը բազում տերեր է փոխել, այն վերջին տարիներին պատկանում է ծնունդով Ջավախքից գրող, հասարակական գործիչ Օքրո Օքրոյանի՝ ռուսաստանաբնակ գործարար որդիներին: Կոմբինատի սեփականության հետ կապված քաղաքացիական հայց է քննվում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում: Արսեն Միքայելի Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ «Իջեւանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ-ի՝ խնդրելով անվավեր ճանաչել բաժնետերերի 2021թ. մայիսի 31-ի ժողովի որոշումը, որպես հետեւանք՝ անվավեր ճանաչել «Իջեւանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲԸ-ի կողմից Արսեն Հարությունյանին պատկանող բաժնետոմսի հետգնումը եւ վերականգնել Արսեն Հարությունյանի սեփականության իրավունքը «Իջեւանի Բենտոնիտ Կոմբինատ» ԲԲ ընկերության՝ թվով 2404 հատ, յուրաքանչյուրը 7237 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերի նկատմամբ, ինչպես նաեւ անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2021թ. մայիսի 31-ի ժողովի որոշման հիման վրա կատարված կանոնադրության փոփոխությունը: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի քաղաքի նստավայրում սույն քաղաքացիական հայցով նախնական դատական նիստեր են կայանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ճՏՊ. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

31-ԱՄՅԱԿ

Հայաստանի երրորդ Հանրապետությունը սեպտեմբերի 21-ին նշում է անկախության 31-րդ տարեդարձը: 31 տարի առաջ հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով իր վճռական «Այո»-ն ասաց Հայաստանի անկախությանը: Հայաստանի չափահաս բնակչության 95% մասնակցության պարագայում ընտրողների 99.5%-ը «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի ժողովրդավարական անկախ պետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս» հարցին դրական պատասխան տվեց: Երկու օր անց՝ սեպտեմբերի 23-ին, երկրի Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ, ինքնիշխան հանրապետություն:

Նորանկախ Հայաստանի հռչակմամբ սկիզբ դրվեց Հայաստանի երրորդ Հանրապետության պատմությանը: Արդեն 30 տարի Հայաստանի տարածքում գործում են միայն ՀՀ սահմանադրությունը եւ օրենքները:

Այս տարի ՀՀ անկախության 31-ամյակին նվիրված միջոցառումները, Ադրբեջանի՝ սեպտեմբերի 12 լույս 13-ին Հայաստանի դեմ իրականացրած ագրեսիայի պատճառով Կառավարությունը հետաձգել է:

«ՓԱԽՈՒՍՏ» ԶՈՐԱՀԱՎԱՔԻՑ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի՝ մասնակի զորահավաք հայտարարելուց եւ ելույթ ունենալուց հետո կրկին կտրուկ փոփոխություններ են տեղի ունեցել:

Նախ՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկան է կտրուկ անկում ապրել Պուտինի ելույթից հետո, բացի այդ՝ կտրուկ թանկացել են Մոսկվա-Երեւան ավիատոմսերի արժեքները: Օրինակ՝ երեկվանից Մոսկվա - Երեւան չվերթների տոմսերի գինը կտրուկ բարձրացել է եւ տատանվում է 700.000 դրամից մինչեւ մեկ միլիոն դրամի սահմաններում: Եվ դեռ ավելին, մասնակի զորահավաքի հայտարարումից հետո, տոմսերն արագ սպառված են, առաջիկա օրերի համար եւս: Meduza կայքը հրապարակել է այն երկրների ցանկը, ուր կարելի է «փախչել» ռուսական անձնագրով: Ցանկը գլխավորում է Հայաստանը, որտեղ ՌԴ քաղաքացիները կարող են մնալ 180 օր՝ չունենալով ճամփորդական անձնագիր: Այս ցանկում են նաեւ Բելառուսը, Ղրղզստանը եւ Ղազախստանը: Այս համատեքստում կտրուկ աճել են դեպի Երեւան ինքնաթիռի տոմսերի գները՝ հասնելով մոտ 700 հազար դրամի:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել էր երկրում մասնակի մոբիլիզացիայի մասին: «Մոբիլիզացիան անհրաժեշտ է Ռուսաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելու, ժողովրդի եւ ազատագրված տարածքներում մարդկանց անվտանգությունն ապահովելու համար»», - պարզաբանել է նա:

«Զինվորական ծառայության կկանչվեն միայն այն քաղաքացիները, որոնք գտնվում են պահեստազորում, եւ առաջին հերթին նրանք, ովքեր ծառայել են զինված ուժերում, ունեն կոնկրետ ռազմական մասնագիտություններ եւ համապատասխան փորձ»,- ընդգծել է Պուտինը:

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

1-ԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման օրը Արցախի պետական համալսարանում նշանավորվեց առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությամբ:

Համալսարանից հայտնում են, որ առաջին կուրսեցիների երդման արարողությունը մայր բուհի ավանդական միջոցառումներից է: Սեպտեմբերի 21-ին ԱրՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ կայացավ երդման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցում էին ԱՀ պետնախարար, ԱրՊՀ խորհրդի նախագահ Արտակ Բեգլարյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, հասարակական գործիչ, բարերար Ռուբեն Վարդանյանը, ԱՀ ԿԳՄՍ նախկին նախարար Նարինե Աղաբալյանը, համալսարանականներ: Միջոցառումը մեկնարկեց լռության րոպեով ու ծաղիկներ խոնարհելով՝ ի հիշատակ Արցախյան պատերազմներում նահատակված հերոսների:

Ուսանողների երդման խոսքը ազգային եւ համամարդկային արժեքների պահպանման, գիտելիքների ձեռքբերման եւ հանուն հայրենիքի ու մարդկության բարօրության ծառայելու պարտավորվածության խոսք էր. «Երդվում ենք վառ պահել նահատակված ուսանողների հիշատակը, հավատարիմ մնալ նրանց վեհ գաղափարներին, պատվով եւ պատասխանատվությամբ շարունակել նրանց կիսատ թողած գործը, սիրել եւ սրբությամբ պահպանել հայրենի երկրի զարգացման եւ բարգավաճման ուղին բռնած մայր բուհը»:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով ներկաներին, ռեկտորատի, գիտխորհրդի եւ պրոֆեսորադասախոսական կազմի անունից շնորհավորել է առաջին կուրսեցիներին ՀՀ անկախության տոնի եւ երդման արարողության առթիվ:

«Մայր բուհում ավանդույթ է դարձել առաջին կուրսեցիների երդման արարողությունը: Երդում, որը կատարվում է մեր լույս տղաների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ. ասել է թե՝ Դուք, սիրելի՛ առաջին կուրսեցիներ, երդվելով այս հուշարձանի մոտ, պարտավորվում եք Ձեր ամբողջ կյանքում համալսարանում ձեռք բերված գիտելիքները, փորձը կիրառել միմիայն հայրենիքի բարգավաճման համար»,-նշել է ռեկտորը՝ համոզմունք հայտնելով, որ երդմամբ ստանձնած պարտավորությունները ուսանողները կատարելու են անշեղորեն:

ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, Արցախի Հանրապետության իշխանությունների եւ ԱրՊՀ խորհրդի անունից ՀՀ անկախության տոնի եւ երդմնակալության առթիվ շնորհավորելով ուսանողներին, խորհրդանշական է համարել միջոցառման կազմակերպման օրն ու վայրը, եւ դիմելով ուսանողներին՝ նշել է. «Այն կրթությունը, որը պետք է Դուք ստանաք Արցախի պետական համալսարանում, արժեքահեն կրթություն է. արժեքահեն, որովհետեւ հանուն անկախության, ազատության եւ մեր ազատամարտիկների նվիրման արժեքների ու գաղափարների Դուք պատրաստ եք կրթություն ստանալ եւ շարունակել մեր նախնիների, մեր ավագների կողմից ընտրված ճանապարհը: Շատ ուրախ եմ, որ համալսարանը շարունակում է այս ավանդույթները եւ տարեցտարի բարելավում պայմանները, որի շնորհիվ համոզված եմ, որ տարիների ընթացքում, նաեւ Ձեր ջանքերով, Ձեր ստացած կրթության հիման վրա՝ համատեղ ուժերով մենք կկարողանանք հաղթահարել մեր պետականության ու անկախության առջեւ ծառացած եւ ապագայում ծառանալիք խնդիրները»:

Ուսանողներին շնորհավորել է նաեւ ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը. «Սիրելի՛ ուսանողներ, տեղին կլինի մեջբերել Նժդեհի խոսքերը. «Եթե ուզում ես գուշակել ազգի ապագան, նայիր երիտասարդությանը»: Վաղը մենք հնձելու ենք այն, ինչ ցանում ենք այսօր: Դուք եք այն հիմնաքարը, որը կլինի մեր պետականության ամրապնդողը: Եղեք հավատարիմ Ձեր երդմանը եւ հող հայրենիին»:

Հասարակական գործիչ եւ բարերար Ռուբեն Վարդանյանը, շնորհավորելով ուսանողներին, հորդորել է նրանց լինել ինքնավստահ եւ հավատալ սեփական ուժերին, որը, նրա խոսքով, հաջողության հասնելու ուղին է. «Հավատացե՛ք, որ ամեն ինչ Ձեր ձեռքերում է, Ձեր ձեռքերում է Ձեր ապագան: Ուզում եմ Ձեզ ցանկանալ, որ կյանքում երբեք չհիասթափվեք: Հավատացեք Ձեր ուժերին, եւ ամեն ինչի կհասնեք, կկարողանաք հաղթահարել բոլոր դժվարություններն ու խնդիրները: Եթե քո մեջ կա հավատ եւ ուժ, դու կհասնես նպատակներիդ: Ուզում եմ ցանկանալ, որ լինեք ուժեղ, երջանիկ, միշտ հավատաք ձեր ուժերին եւ գնաք առաջ. չկանգնեք»:

Արարողության ընթացքում ուսանողները հանդես են եկել ասմունքով եւ հայրենասիրական երգերի կատարմամբ, իսկ ամենաբարձր միավորներով բուհ ընդունված առաջին կուրսեցիները՝ հանդիսավոր ստացել իրենց ստուգման գրքույկներն ու ուսանողական տոմսերը:

ՆՈՐ ՓՈՍԵՐ

ԵՌԱԲԼՈՒՐԻ «ԼՌՈՒԹՅՈՒՆԸ» ԽԱԽՏՎԵԼ Է

Եռաբլուրի համընդհանուր ու տնքացող լռությունը նոր փոսեր փորող տեխնիկայի ձայն է խախտում՝ ասես բթացնելով արդեն երկու տարի բոլորիս համակացած ցավն ու մղկիտը:

Ամենուր տարածված խնկի հոտն է դույզն-ինչ հանգստացնում մարդկանց, բայց զավակներին ամենուր փնտրող ծնողների ցավին այն ոչ մի կերպ չի դարմանում: Քարացած հայացքներով դեպի անհայտը նայող անմահացածների հետ լուռ կամ հեծկլտալով մեկուսի մենակխոսող մայրերի մաղթանքը մեկն է՝ աշխարհում ոչ մի կին ու ծնող չզգա, չտեսնի այն, ինչ իրենք են այժմ զգում: Մարդկային այդ ցանկությունը սակայն նորից փոս փորող տեխնիկայի աղմուկն է բթացնում:

Իրական սահման գծածների անդորրը եռաբլուրում մեկ այլ՝ սեւուսպիտակի սահման գծածներն են խաթարում ու ոտնատակ անելով ամեն մի սրբություն՝ քարշ տալիս հերոսածինն մայրերին, հայրերին, ինչ է թե՝ երկրի փաստացի ղեկավարը մի քանի րոպեով կարողանա Եռաբլուր այցելել:

Արցախյան առաջին ազատամարտի մասնակից Վարդան Ստեփանյանի՝ Դուշմանի պատվին Վարդան անվանակոչված Ամալյանների զավակը, ցավոք, 44-օրյա պատերազմի ժամանակ ինքն էլ Դուշմանի կողքին ննջեց: Բեկված քարի մի հատվածում Վարդանի ծնունդն է, մյուս հատվածում՝ անմահությունը:

Վարդանի ու հազարավոր հերոս տղաների խիզախության շնոհիվ պահած ու փայփայած պետությունը՝ Հայաստանի Հանրապետութունը, այսօր 31 տարեկան է, ու անկախ այն հանգամանքին, որ օրվա իշխանությունը ո՛չ զորահանդես, ո՛չ էլ պետական նշանակության այլ միջոցառում չի կազմակերպել, այնուամենայիվ, հայ մայրերը դեռ շարունակելու են Վարդաններ, Դավիթներ, Նարեկներ եւ բազում դյուցազուններ ծնել՝ նրանց համար հայրենիքի մասին օրոր երգելով:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԴԻՄՈՒՄ

ՅՈՒՆԵՍԿՕ-Ն ՊԵՏՔ Է ԴԱՏԱՊԱՐՏԻ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը դաշտոնական նամակ է հղել Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեին՝ ներկայացնելով 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ռազմական ագրեսիան Հայաստանի Հանրապետության ինֆրակառուցվածքի վրա եւ դրա հետեւանքները:

Նամակում նշվել է, որ ագրեսիայի ընթացքում ադրբեջանական զինուժի թիրախ են դարձել ոչ միայն ռազմական դիրքերը, այլեւ քաղաքացիական ենթակառուցվածքները: Մասնավորապես, Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից հավաքագրված տվյալների համաձայն՝ Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերից տեղահանվել է առնվազն 7600 անձ: Տեղահանվածների ճնշող մեծամասնությունը կանայք, երեխաներ եւ տարեցներ են, որոնց թվում՝ նաեւ հաշմանդամություն ունեցող անձինք:

Նամակի մեջ ընդգծված է նաեւ, որ Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիայի հետեւանքով ընդհատվել է ուսումնական գործընթացը հանրակրթական ու նախադպրոցական հաստատություններում՝ պայմանավորված երեխաների եւ աշխատակիցների անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Արդյունքում, Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերի 172 դպրոցներում սովորող 24.873 դպրոցական եւ 69 մանկապարտեզների 5808 նախադպրոցական տարիքի երեխաներ զրկվել են կրթության եւ բարեկեցիկ ապագայի իրավունքից: Վտանգված է նաեւ այդ մարզերում գործող արտադպրոցական ուսումնական հաստատությունների, քոլեջների եւ բուհերի գործունեությունը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարը նշել է, որ սովորողների, ուսուցիչների եւ հաստատությունների թիրախավորումը միջազգային մարդասիրական իրավունքի եւ կրթության իրավունքի կոպտագույն խախտումն անընդունելի է ցանկացած պարագայում եւ պետք է խստորեն դատապարտվի:

Նամակով ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը դիմել է Օդրի Գազուլին՝ խնդրելով արձագանքել ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետեւանքով առաջացած ծանր սպառնալիքին եւ դատապարտել Ադրբեջանի նմանօրինակ թշնամական գործողությունները՝ այդպիսով նպաստելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի մանդատի հիմնարար սկզբունքների հետագա խախտումների կանխարգելմանը եւ կրթության իրավունքի, բռնի տեղահանված բնակչության իրավունքների, ռազմական գործողությունների ընթացքում քաղաքացիական բնակչության եւ քաղաքացիական ենթակառուցվածքների պաշտպանության իրավունքների ապահովմանը:

Նամակին կցվել է նաեւ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից պատրաստված հատուկ զեկույցը:

ԼՈՒՐԵՐ

ՄԱՐՏԱԿԱՆ ԵՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ

Այս պահին Ներքին Հանդում իրադրությունը նորմալ է: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Ներքին Հանդի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանը:

«Այս պահին գյուղում գտնվում են միայն տղամարդիկ ժամկետային զինծառայողների հետ միասին: Թշնամին շատ մոտ է գյուղին, տեղ կա 7 կմ է հեռու, տեղ կա 1՝ կմ, տեղ կա՝ 500մ, նայած տեղ: Տրամադրություններս մարտական են, բայց Անկախության տոնն է, հնարավոր են սադրանքներ. թշնամին մնում է թշնամի»,-նշեց նա:

Հիշեցնենք, որ երեկ գիշեր Սյունիքի մարզի Ներքին Հանդ համայնքում հակառակորդը կրակ է բացել, ինչը մոտ 10-15 րոպե է տեւել, որի հետեւանքով ունենք մեկ վիրավոր:

ԻՆՉՈ՞Ւ Է ԼՌՈՒՄ ԴԵՆ ԲԻԼԶԵՐՅԱՆԸ

Հայաստանի համար այս ծանր օրերին, երբ ողջ աշխարհի հայերը փորձում են համախմբվել եւ պայքարել Ադրբեջանի դեմ, լռում է ամերիկահայ պրոֆեսիոնալ պոկեր խաղացող, դերասան եւ ինտերնետային աստղ Դեն Բիլզերյանը, ով ամիսներ առաջ էր Հայաստանում, ում դիմավորելու եւ ողջունելու համար մեծ բազմություն էր հավաքվել: Դեն Բիլզերյանը, ով երկրպագուների մեծ բանակ ունի ամբողջ աշխարհում, ում Հայաստանին աջակցող կոչը մեծ լսարան կարող էր ապահովել, սեպտեմբերի 12-ից ի վեր ոչ մի գրառում չի արել ու Հայաստանին ոչ մի աջակցող կոչով հանդես չի եկել, իսկ մինչ այդ կարող ենք նրա պաշտոնական էջերում տեսնել մերկ կանանց հետ զվարճալի եւ արկածներով լի տեսանյութեր: Ավելին, հիշեցնենք, որ համացանցում քարկոծող արշավ էին սկսել այն հայտնի հայերի դեմ, ովքեր համացանցում չէին դատապարտում Ադրբեջանի գործողությունները, եւ այս օրերին առավել շատ քննադատվեց եւ քարկոծվեց ռուսաստանաբնակ հայտնի դիմահարդար Գոհար Ավետիսյանը: Հիշեցնենք, որ դեպտեմբերի 12-ին լույս 13-ի գիշերը Ադրբեջանը լայնածավալ հարձակում էր գործել Հայաստանի ողջ երկյանքով, ինչի հետեւանքով ունենք շուրջ 207 զոհված եւ անհետ կորած:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄՏԱԴԻՐ Է ՄԱՄՆԱԿՑԵԼ

Պորտուգալիայի հավաքականի ավագ, անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» 37-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն մտադիր է մասնակցել նաեւ 2024թ. Եվրոպայի առաջնության եզրափակիչ մրցաշարին, որը կանցկացվի Գերմանիայում:

«Ես հույս ունեմ Պորտուգալիայի հավաքականում խաղալ եւս մի քանի տարի: Դեռ զգում եմ մոտիվացիա եւ ունեմ հավակնություններ: Իմ ֆուտբոլային ուղին դեռ չի ավարտվել: Ես կլինեմ այս տարվա աշխարհի առաջնությունում եւ ցանկանում եմ մասնակցել նաեւ Եվրո-2024-ին»,- ասել է Ռոնալդուն:

Ռոնալդուն 2004, 2008, 2012, 2016 եւ 2020 թվականների Եվրոպայի առաջնության, 2006, 2010, 2014 եւ 2018 թվականների աշխարհի առաջնության մասնակից է:

Քաթարում աշխարհի առաջնությունը կանցկացվի նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 18-ը: Պորտուգալիայի հավաքականի մրցակիցները Ի խմբում կլինեն Ուրուգվայի, Գանայի եւ Հարավային Կորեայի հավաքականները:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՈՐԾԱԿԱԼ

Ռուսական էստրադայի երգչուհի Ալլա Պուգաչովային կստուգեն ռուսական բանակը վարկաբեկելու համար՝ իրեն օտարերկրյա գործակալ ճանաչելու խնդրանքով գրառման պատճառով:

Համապատասխան հայտարարությամբ դատախազություն է դիմել Մոսկվայի մարզի մի բնակիչ: Նրա կարծիքով՝ արտիստուհու դիմումում հիմքեր չկան՝ իրեն օտարերկրյա գործակալի կարգավիճակ շնորհելու վերաբերյալ, սակայն գրառումը պարունակում է վիրավորանքներ Ռուսաստանի զինված ուժերի հասցեին:

Այդ պատճառով նա դիմել է իրավապահ մարմիններին եւ խնդրել ստուգել կատարողին՝ «օտարերկրյա աջակցություն» ստացած անօրինական գործողությունների եւ ՌԴ զինված ուժերի օգտագործումը վարկաբեկելուն ուղղված հրապարակային գործողությունների համար:

Սեպտեմբերի 18-ին Պուգաչովան խնդրել է, որպեսզի ամուսնու՝ Մաքսիմ Գալկինի նման իրեն էլ ճանաչեն որպես օտարերկրյա գործակալ:

ԿՏԵՂԱՓՈԽՎԻ «ԲԱՐՍԵԼՈՆԱ»

Մադրիդի «Ռեալի» եւ Իսպանիայի հավաքականի 26-ամյա կիսապաշտպան Մարկո Ասենսիոն մեկնաբանել է լուրերը, թե հունվարին կամ հաջորդ ամռանը կարող է տեղափոխվել «Բարսելոնա»: Նրա պայմանագիրն Արքայական ակումբի հետ նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը:

«Այդ մասին ոչինչ ասել չեմ կարող: Այս առավոտ 200 հաղորդագրություն եմ ստացել այդ թեմայով: Հիմա շատ են խոսակցությունները իմ հնարավոր տեղափոխության մասին: Դա նորմալ է, քանի որ արդեն հունվարին կարող եմ պայմանագիր կնքել այլ ակումբի հետ:

● *Սեպտեմբերի 26-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա Երգեհոնի միջազգային փառատոնի բացման համերգ: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝19:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը ինչպե՞ս է կատարվում:

Արմեն Հայրապետյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկվում է Կ=Հ X ԶԱԳ + ԶՍ X ԶԱ բանաձեւով, որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

ԶՍ-ն՝ զինվորական ծառայության ստաժի տարիները,

ԶԱ-ն՝ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը,

ԶԱԳ-ն՝ զինծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործակիցը (այսուհետ՝ զինծառայողի անձնական գործակից):

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը եւ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը սահմանում է Կառավարությունը: Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը եւ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը չեն կարող պակաս լինել զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի եւ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքի նախկինում սահմանված չափերից:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խանութ մուտք է գործել մախաստնից ապրանք: Ինչպե՞ս հայտարարել վաճառքի գինը (առաջ հասույթի գրում էր գրվում վաճառքի գինը):

Կարեն Յավրյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան, վաճառքի ցուցադրված յուրաքանչյուր ապրանքատեսակ պետք է ունենա գնապիտակ: Գնապիտակի վրա նշվում են ապրանքի անվանումը, մեկ միավորի գինը եւ գնապիտակի լրացման թվականը: Գնապիտակը կնքվում է վաճառողի կնիքով (ըստ ցանկության) կամ ստորագրվում է պաշտոնատար անձի կողմից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան, վաճառքի ցուցադրված յուրաքանչյուր ապրանքատեսակ պետք է ունենա գնապիտակ: Գնապիտակի վրա նշվում են ապրանքի անվանումը, մեկ միավորի գինը եւ գնապիտակի լրացման թվականը: Գնապիտակը կնքվում է վաճառողի կնիքով (ըստ ցանկության) կամ ստորագրվում է պաշտոնատար անձի կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի անկախության 31-ամյակի կապակցությամբ եւ Ադրբեջանի կողմից վերջին ագրեսիայի համատեքստում ի համերաշխություն Հայաստանի՝ երեկ Փարիզի քաղաքապետարանի վրա ծածանվել են Հայաստանի Հանրապետության դրոշները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: